Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Հակոբ Արշակյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ղազախստանի Հանրապետության ք. Նուր-Սուլթան, 2019թ. սեպտեմբերի 16-ից 17-ը:

4. Հրավիրող կողմը.

Ղազախստանի Հանրապետության թվային զարգացման, նորարարությունների և տիեզերական արդյունաբերության նախարարություն**:**

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն Կապի տարածաշրջանային համագործակցության (ԿՏՀ) Կապի վարչակազմերի ղեկավարների խորհրդի 55-րդ և Կապի տարածաշրջանային համագործակցության տեղեկատվայնացման հարցերով ԱՊՀ մասնակից-պետությունների համակարգող խորհրդի 25-րդ համատեղ նիստին:

6. Քննարկված թեմաները.

2019թ. սեպտեմբերի 16-ից 17-ը Ղազախստանի Հանրապետության ք. Նուր-Սուլթանում կայացած Կապի տարածաշրջանային համագործակցության Կապի վարչակազմերի ղեկավարների խորհրդի 55-րդ և Կապի տարածաշրջանային համագործակցության տեղեկատվայնացման հարցերով ԱՊՀ մասնակից-պետությունների համակարգող խորհրդի 25-րդ համատեղ նիստին մասնակցել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի գլխավորած պատվիրակությունը:

Նիստի ընթացքում քննարկվել են տարածաշրջանային կարևորություն ունեցող մի շարք հարցեր, այդ թվում՝ Կապի Տարածաշրջանային Համագործակցության (ԿՏՀ) ԿՏՀ գլխավոր տնօրենի և համակարգի ներսում մի քանի այլ ղեկավար պաշտոններում ընտրությունները: Անդրադարձ է եղել ԿՏՀ մասնակից-պետություններում թվայնացման զարգացման հեռանկարային ուղղություններին, 5G տեխնոլոգիաների զարգացման և ներդրման հնարավորություններին, Ռադիոկապի համաշխարհային համաժողովի (WRC) և Հեռահաղորդակցության կապի ստանդարտացման համաշխարհային նստաշրջանի (WTSA 2020) անցկացման նախապատրաստական աշխատանքներին, օրակարգային մի շարք այլ հարցերի:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Վերոնշյալ նիստի ընթացքում ելույթով հանդես է եկել Հակոբ Արշակյանը: Ողջունելով մասնակիցներին՝ Հ. Արշակյանն իր ելույթի ընթացքում նշել է, որ տնտեսության թվայնացումը

ենթադրում է նոր չափանիշերի ներդրում, էկոհամակարգերի ստեղծում, զարգացման ռազմավարության մշակում ու կիրառում: Հատուկ ընդգծվել է, որ ՀՀ կառավարությունն այս ուղղությունը առաջնահերթություն է համարում, այդ իսկ պատճառով կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ստեղծվել է Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, որը պետք է մշակի և իրականացնի թվայնացման, էկոհամակարգերի ստեղծման և ռազմական արդյունաբերության ոլորտում պետական քաղաքականությունը: Նախարարը նաև նշել է, որ թվայնացման զարգացումը տարածաշրջանի երկրներին հնարավորություն կտա տնտեսության և սոցիալական կյանքի բոլոր ոլորտներն ենթարկել արմատական փոփոխությունների: Ընդգծվել է, որ համատեղ ենթակառուցվածքային նախագծերի զարգացումը թույլ կտա ամբողջ տարածաշրջանը դարձնել ավելի մրցունակ, և ներգրավված լինել համաշխարհային տնտեսության գործընթացներում: Նշվել է նաև, որ Հայաստանն այդ ուղղությամբ ակտիվորեն համագործակցում է Եվրասիական Տնտեսական Միությունում, ինչպես նաև Եվրոպական Միության հետ՝ թվային օրակարգի շրջանակներում որոշումների կայացման և ծրագրերի իրականացման բարձր չափանիշեր ապահովելու համար: Շեշտվել է, որ, հաշվի առնելով Մերձավոր Արևելքի և ԵՄ-ի հետ Հայաստանի Հանրապետության ավանդական կապերը, Հայաստանն ակտիվորեն ներգրավված է ինչպես ենթակառուցվածքային, այնպես էլ հայաստանյան թվային շուկաները ԵՄ շուկային համապատասխանեցմանն ուղղված նախագծերում:

Հակոբ Արշակյանն ընդգծել է նաև, որ «Թվային շուկաների ներդաշնակեցում» ծրագրի շրջանակներում Հայաստանն աշխատում է լայնաշերտ ինտերնետ հասանելիության ռազմավարության, էլեկտրոնային թվային միջանցքների մշակման, թվային հմտությունների կատարելագործման և այլ առնչվող գործողությունների ուղղությամբ: Մասնավորապես ասվել է, որ Հայաստանը ներկայումս իրականացնում է լայնածավալ ենթակառուցվածքային նախագծեր Մերձավոր Արևելքի երկրների հետ: Նախարարը հույս է հայտնել, որ Հայաստանի փորձն այս ոլորտում թույլ կտա Միջին Ասիայի երկրների հետ համատեղ կյանքի կոչել նոր ենթակառուցվածքային նախագծեր, որոնք մեր տարածաշրջանը կկապեն Ասիական և Խաղաղօվկիանոսային, ինչպես նաև Եվրոպայի երկրների հետ:

ԱՊՀ անդամ-պետությունների կապի և թվայնացման ոլորտները համակարգող նախարարների հետ միասին Հ. Արշակյանը հանդիպել է Ղազախստանի վարչապետ Ասկար Մամինի հետ:

Երկկողմ հանդիպումներ են անցկացվել ՌԴ թվային զարգացման, կապի, զանգվածային հաղորդակցության նախարար Կոնստանտին Նոսկովի, Ղազախստանի թվային զարգացման, նորարարության և աերոտիեզերական արդյունաբերության նախարար Ասկար Ժումագալիևի, ԻԻՀ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության նախարար Մոհամմադ Ջավադ Ազարի Ջահրոմիի, Ուզբեկստանի տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության զարգացման նախարար Շուհրադ Սադիկովի, ինչպես նաև Կապի Տարածաշրջանային Համագործակցության (ԿՏՀ) գլխավոր քարտուղար Նուրիդին Մուխիդինովի, Հեռահաղորդակցության Միջազգային Միության (ՀՄՄ) գլխավոր քարտուղար Հուլին Ժաոյի և Համաշխարհային Փոստային Միության (ՀՓՄ) գլխավոր տնօրեն Բիշար Հյուսեյնի հետ: Հանդիպումների ընթացքում Հակոբ Արշակյանը խոսել է նորաստեղծ նախարարության հիմնական

ուղղությունների մասին, ներկայացրել Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման տեսլականը, թվայնացման ոլորտում ՀՀ կառավարության առաջնահերթությունները, որդեգրած պետական քաղաքականությունը, հայկական գիտական մեծ ներուժի առկայությունը տեխնոլոգիական ոլորտի մի շարք ուղղություններում: Նախարարը հատկապես կարևորել է ստարտափ էկոհամակարգի զարգացման ուղղությամբ իրականացվող գործունեությունը: Քննարկվել են համատեղ ծրագրերի իրականացման հնարավորություններն ու երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր: Մասնավորապես, Հուլին Ժաոյի և Բիշար Հյուսեյնի հետ հանդիպումների ընթացքում Նախարարն անդրադարձել է երկուստեք ձևավորված գործընկերային կապերին, ընդգծել հեռահաղորդակցության և փոստային ոլորտներում առկա համագործակցության ներուժը և այն առաջիկայում ավելի խորացնելու ու զարգացնելու պատրաստակամությունը:

Աշխատանքային այցի շրջանակներում նախարարն այցելել է նաև Աստանայի նորարարական կենտրոն («Astana hub»), որի նպատակը երկրի տնտեսության զարգացմանը նպաստող բարձր տեխնոլոգիաների ոլորտի նախագծերին աջակցություն է: Նախարարը շրջել է կենտրոնում, ծանոթացել տեղի ընկերությունների գործունեությանն ու հնարավորություններին, ուսումնասիրել դրանք Հայաստանում ներդնելու նպատակահարմարությունն ու իրատեսությունը:

8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ղազախստանի վարչապետ Ասկար Մամինը հանդիպման ընթացքում պատրաստակամություն է հայտնել աջակցել Նուր-Սուլթանում ԹՈՒՄՈ ստեղծարար կենտրոնի ստեղծմանը:

ՌԴ թվային զարգացման, կապի, զանգվածային հաղորդակցության նախարար Կոնստանտին Նոսկովի հետ հանդիպմանը քննարկվել են հետևյալ հարցերը.

- Արմֆոնների, Արմթաբերի սերտիֆիկացման հետ կապված հարցի շուրջ նախարարը պատրաստակամություն հայտնեց աջակցել խնդրի հանգուցալուծմանը: Աշխատանքային կարգով կկապվենք Էկոնոմիկայի նախարարության հետ՝ հարցի լուծմանը նպաստելու նպատակով,
- Քննարկվեցին համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացման հնարավորությունները 5G կապի ոլորտում
- Ռուսական կողմը առաջարկեց միանալ մաքսային միության տարածքում տեղական ընկերություններին տրվող արտոնությանը, որի դեպքում Հայկական ընկերությունների կողմից առաջարկվող ծառայությունները կստանան առաջնահերթություն ոչ միայն Հայկական, այլ նաև ռուսական շուկայում: Այս հարցը աշխատանքային կարգով կքննարկվի շահագրգիռ մարմինների հետ:

Ուզբեկստանի տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության զարգացման նախարար Շուհրադ Սադիկովի հետ քննարկվել են հետևյալ հարցերը՝

- Սադիկովը իր պատրաստակամությունն է հայտնել բարձր մակարդակով կազմակերպել առաջիկայում հայկական պատվիրակության այցը Ուզբեկստան:

ԻԻՀ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության նախարար Մոհամմադ Ջավադ Ազարի Ջահրոմիի հետ քննարկվել են հետևյալ հարցերը՝

- Իրանական կողմը հետաքրքրված է Հայաստանում կրիպտոարժեքների մայնինգի ուղղությամբ կատարել ներդրումներ,
- Իրանական կողմը նաև հետաքրքրված է Հայաստանի հետ համատեղ օպտիկամանրաթելային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ՝ դեպի Ծոցի երկրներ ինտերնետի տարանցման նպատակով:

Կապի Տարածաշրջանային Համագործակցության (ԿՏՀ) գլխավոր քարտուղար Նուրիդին Մուխիդինովին նախարար Արշակյանն առաջարկել է ԿՏՀ 2021 թ. հաջորդ նիստն անցկացնել Հայաստանում, որը հավելյալ կքննարկվի և կորոշվի:

Հեռահաղորդակցության համաշխարհային միության գլխավոր քարտուղար Հուլին Ժաոյի հետ Արշակյանը քննարկել է ռադիոհաճախականային սպեկտրի կարգավորման հայ-ադրբեջանական աշխատանքային խմբի առաջիկա հանդիպմանը վերաբեվող հարցեր: Ընդհանուր առմամբ աշխատանքային խմբի արդյունքները դրական գնահատականի են արժանացել:

Նախարար Հակոբ Արշակյանը բոլոր գործընկերներին հրավիրել է Հայաստան՝ մասնակցելու 2019թ. հոկտեմբերի 6-ից 9-ը ք. Երևանում կայանալիք Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովին (WCIT 2019): Իրանի, Ղազախստանի և Ուզբեկստանի նախարարները հաստատել են իրենց մասնակցությունը, իսկ մնացած գործընկերները առաջիկայում կհայտնեն իրենց մասնակցության մասին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

X _____

Հակոբ Արշակյան
20.09.2019թ.